Ամերիաբանկ ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) «Հրավիրիր սիրելիիդ» («Հրավիրիր ընկերոջդ» ուղղորդման ծրագիր) արշավի պայմաններ (այսուհետ՝ Արշավ)

Բանկի այն հաճախորդները (այսուհետ՝ հրավիրող), որոնք 2026թ. փետրվարի 14-ից մինչև փետրվարի 28-ը ներառյալ (այսուհետ՝ արշավի գործողություն) «Հրավիրիր ընկերոջդ» ուղղորդման ծրագրի շրջանակում MyAmeria հավելվածից «Հրավիրիր ընկերոջդ» ֆունկցիոնալի միջոցով կուղղորդեն Բանկի հաշվետեր հաճախորդ չհանդիսացող այլ ֆիզիկական անձի (այսուհետ՝ հրավիրվող) հեռավար եղանակով դառնալ Բանկի հաճախորդ, բացել հաշիվ, պատվիրել և ակտիվացնել Mastercard Standard տեսակի քարտ, արշավի գործողության ավարտից հետո՝ մինչև 2026թ. մարտի 15-ը ներառյալ, իրենց բանկային հաշվին կստանան խրախուսման վճար **5000** /առանց հարկերի/ ՀՀ դրամի չափով:

Արշավի պայմանները կիրառելի են, եթե պահպանված են ստորև պահանջները.

- Հրավիրվողը Բանկի հաճախորդ պետք է դառնա և պատվիրի **Mastercard Standard** հեռավար եղանակով՝ հրավերի արդյունքում գրանցվելով SMS հաղորդագրությամբ ստացված հղմամբ,
- Հրավիրողը պետք է հրավերը ուղարկած լինի առավելագույնը մինչև փետրվարի 28-ը ներառյալ,
- Հրավիրվողը պետք է Բանկի հաճախորդ դառնա և պատվիրի Mastercard Standard տեսակի քարտ 2026թ. թվականի փետրվարի 14-ից մինչև 2026թ. փետրվարի 28-ը ներառյալ և ակտիվացնի այն մինչև 2026 թվականի մարտի 15-ը,
- Արշավի ամփոփման պահին՝ **մարտի 15-ի դրությամբ**, հրավիրողը և հրավիրվողը պետք է հանդիսանան Բանկի հաշվետեր հաճախորդ,
- Հրավիրվողը չպետք է լինի **2025թ. հունիսի 1-ից** հետո փակված և արշավի շրջանակում վերաբացված հաճախորդ: